

## ԽՍՀՄ ՊՐԵԶԻԴԵՆՏ Մ. Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

**Մոսկվա, Կրեմլ**

Ի լրացումն Մեր 13 սեպտեմբերի հեռագրի, բեկյալ սրտով կրկին դիմում ենք Ձերդ Գերազանցության, Ձեր մարդասիրական զգացումներին, որ խնայեք կյանքը հացադուլ հայտարարած ժողովրդական դեպուտատներ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի, լրագրող Զորի Բալայանի, արվեստագետ Սոս Սարգսյանի, Լեռնային Ղարաբաղի դեպուտատների և մյուսների, որոնց հուսահատ աղերսանքն է, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում վերականգնվի Խորհրդային իշխանությունը ուղղակի Ձեր պրեզիդենտական հեղինակության ներքո, որ կլինի իրապես արդար մի վերաբերմունք Ձեր կողմից՝ փրկելու համար այդ մարզի հայ ազգաբնակչությունը Ձեզի արդեն ծանոթ անդունդի եզրին հասած ողբերգական կացությունից:

Ամենախորին հարգանքով՝

**ՎԱԶԳԵՆ Ա.**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
15 սեպտեմբեր 1990 թ